ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-028-26.02.2019-ՊԻ-011/0, Կ-028[1]-26.02.2019-ՊԻ-011/0, Կ-028[2]-26.02.2019-ՊԻ-011/0 օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	**Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան**	«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 8, մաս 1, կետ 1	Առաջարկվում է նշված կետով նախատեսված՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում ցմահ ազատազրկման դատապարտված անձին մենախցում պահելու մասին	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի նշված կետում «կարող է պահվել» բառերը փոխարինվել են «պահվում է» բառերով:	Ընդունվել է:

			որոշման կայացումը դարձնելով պարտադիր:		
2	**Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան**	«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 5	Նախագծի նշված հոդվածից «պահվող» բառը հանել՝ առաջարկվող կարգավորումը համահունչ դարձնելով «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 95-րդ հոդվածում կատարվող լրացմանը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագծի նշված հոդվածով լրացվող պարբերությունից «պահվող» բառը հանվել է:	Ընդունվել է: